ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՆԴԻՐ.—ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԹԻՒՐԹԻԱՑՈՒՄ ԵՒ ՄԻՏՏԻՆԴՆԵՐ.—ԴԱՐՁԵԱԼ ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ.

Ռուսահայոց կեանքում վերջին ամիսներն առանձին կենսունակ խնդիրներ չեն եռում. մի հատիկ էական խնդիրը դպրոցական խնդիրն է։

Ներկայումս հայ լրագրութեան մէջ ահագին բանակռիւ է մղւում հայոց ուսումնարանների հոգաբարձութիւնների, ուսուցիչների և դպրոցական խնդրով շահագրգռուածների մէջ. բանակռուի առիթ է տուել այն հանգամանքը, որ Ցոռնանեան ուսումնարանի նոր հոգաբարձութիւնը միանգամից հեռացրեց դպրոցից տեսուչ Տ. Ռաշմաճեանին և ամբողջ ուսուցչական խումբը և տեսուչ նշանակեց Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Ա. Մալխասեանցին։ Այս դէպքը առիթ տուաւ բազմաթիւ բողոքների, որ ուսուցչական պատիւը ոտնակոխ է արուած, որ ուսուցիչները անկայուն և անապահով վիճակ ունեն և որ նոցա բաղդը կախուած է հոգաբարձուների և հոգևոր իշխանութեան քմահաճոյքից։

Շատ ճիշտ են ի հարկէ այդ բողոքները և մի անգամ ևս գալիս են ապացուցանելու, որ մենք, հայերս, անընդունակ ենք մեր հաստատութիւնները կառավարելու։ Բայց նշանակալից է այն, որ այս խնդիրը ծագեց այն դէպքից, երբ մի կուսակցութիւն հեռացրեց միւս կուսակցութեան մարդկանցը. մի հանգամանք, որ միշտ և ամեն ժամանակ կատարուել է առանց բողոքի և բողոքողի ձայներն էլ խեղդուել են իշխող կուսակցութեան ճնշման ներքոյ։ Ինչու՞ են մոռացուել այն ժամանակները, երբ մի կուսակցութիւն արձակելով Ներսիսեան դպրոցի տեսչին պաշտօնից և հրաւիրելով իր արբանեակ Բէգնազարեանցին տեսուչ, միանգամից արձակեց դպրոցի բոլոր ուսուցիչներին և յետ ընդունեց նոցանից միայն իր հաշիւներին ձեռնտու մի քանի անձանց. ինչու՞ են մոռացուել նման բազմաթիւ դէպքեր վերջին երեսուն տարուայ ըն-

թացքում, երբ նոյն դպրոցում տասնեակ անգամ կրկնուել է նոյն երևոյթը աւելի կամ նուազ չափով և բազմաթիւ ուսուցիչներ ու ծառայողներ փողոց են շպրտուել առանց որև է պատճառի ու թողնուել բաղտի կամքին։ Ինչու են մոռացուել այն դէպքերը, երբ մի հոգաբարձութիւն իր մարդկանց պաշտօն տալու համար ինքնակամ կերպով դպրոցի ծրագիրն է փոխել և մէկ՝ հնախօսութիւն է մտցրել, մէկ՝ հաշուապահութիւն, մէկ՝ մարմնամարզութիւն և այդ մարդկանց հեռանալու հետ միասին ծրագրից դարձեալ հանել նորաստեղծ առարկաները։ Ինչու չեն մտաբերում մարդիկ, որ հայ դպրոցի հոգաբարձութիւնները միշտ այն լիակատար ինքնավարական ազատութիւնն են վայելել իրանց գործողութիւնների մէջ, որպիսին չէ վայելում այդ հաստատութիւնը ոչ մի բարեկիրթ երկրում. հոգաբարձութիւնները թոյլ են տուել, որ դպրոցի ուսուցչական կազմը հիւրանոցներում ժողովներով դատապարտեն այնպիսի մասնագէտ հանճարներին, ինչպիսին Մակար Եքմալեանն էր, թոյլ են տուել, որ Եքմալեանը իբրև ուսուցիչ տարիներով դպրոցի ծառայի սենեակում անցկացնէ դասամիջոցների ազատ ժամերը, այդպիսով հոգեպէս տանջուի և վերջի վերջոյ խելագարուելով գերեզման իջնէ իսկ դոցա հեղինակները խրախուսուին. հոգաբարձութիւնները թոյլ են տուել, որ ապաշնորհ տնուչներ և ծառայողներ հազար հազարներով աւելորդ վարձատրութիւն ստանան դպրոցական դրամարկղից, թոյլ են տուել, որ 4—5 տարիներ ծառայողներին ահագին կենսաթոշակներ սահմանեն և քահանական տարիներ ծառայողներին առանց թոշակի ճանապարհ դնեն, թոյլ են տուել դպրոցական խոշոր գումարների գոյութիւնը վըտանգի ենթարկել. և թոյլ են տուել շատ և շատ ուրիշ բաներ. և այս ամենի մասին մամուլը խորհրդաւոր լռութիւն է պահպանել. բայց եթէ մամուլը լռէ, Ներսիսեան դպրոցի գաղտնապահ «արխիւ»ը կաղաղակէ...

Ա՞յժմ էք, պարոններ, տեսնում հոգաբարձական շահատակութիւնները, երբ Ձեր կաշուին է դիպչում նոցա ներգործութիւնը. հապա ուր էիք այն ժամանակ։

Խնդրին այդ ձևակերպութեամբ մերձենալը շատ գծուծ բան է։ Նախ և առաջ բացէք թանձր քօղը մեր դպրոցների պատմութեան վրայից և ապա խօսեցէք։